

PARLIAMENT MONITORING

5-րդ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ ԷԹԻԿԱՅԻ ՅԱՐՑԵՐ, ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ I ԹԵՄԱՏԻԿ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան



«ՄԱՆԴԱՏ» փեղեկադրվական հասարակական կազմակերպություն

5-րդ գումարման Ազգային ժողով
Էթիկայի հարցեր, բացակայություններ

Ձեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամեր - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N 19409 Ձեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամեր - Հայաստան կազմակերպության տեսակետներին և դիրքորոշումներին:

ԵՐԵՎԱՆ 2017

Նախաբան

«ԱԺ մոնիտորինգ» ծրագիրը 2012 թվականից դիտարկում է 5-րդ գումարման խորհրդարանի աշխատանքը՝ ուշադրության առանցքում պահելով Ազգային ժողովի օրինաստեղծ և վերահսկողական գործառույթների իրացումը, ԱԺ խմբակցությունների ու պատգամավորների գործունեությունը, հանձնաժողովների աշխատանքը, պատգամավորների բացակայություններին ու էթիկայի հարցերին առնչվող խնդիրները: Դիտարկման արդյունքները յուրաքանչյուր նստաշրջանի ավարտից հետո ամփոփվել են զեկույցներով ու ներկայացրել, թե ինչպես է ՀՀ օրենսդիր մարմինն իրացրել Սահմանադրությամբ իրեն վերապահված հիմնական գործառույթները:

2017թ. 5-րդ գումարման Ազգային ժողովն ավարտում է իր գործունեությունը: 2017թ. խորհրդարանական ընտրություններին ընդամառ ծրագիրն ամփոփում է հնգամյա դիտարկման արդյունքներն ու 5-րդ գումարման խորհրդարանի գործունեությունը ներկայացնում՝ ըստ մշտադիտարկման հիմնական ուղղությունների:

Ներկայացվող զեկույցում ամփոփվել են 5-րդ գումարման խորհրդարանի հետ իր գործունեությունը սկսած էթիկայի հանձնաժողովի բառամյա գործունեության արդյունքները: Հայաստանյան պառլամենտարիզմի պատմության մեջ առաջին անգամ պատգամավորների վարքագիծն ու էթիկայի նորմերը կանոնակարգման առարկա են դարձել 5-րդ գումարման խորհրդարանում, իսկ դրանց նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու լիազորությունը տրվել է էթիկայի հանձնաժողովին: Ի՞նչ պատկեր է արձանագրել հանձնաժողովի գործունեությունը, ի՞նչ միտումներ ու խնդիրներ է բացահայտել: «ԱԺ մոնիտորինգ» ծրագիրն ամփոփել է գումարման ընթացքում իրականացված դիտարկման արդյունքները: Ամփոփումը կազմվել է լրագրողական դիտարկումների, փորձագիտական վերլուծությունների և parliamentmonitoring.am կայքի վիճակագրական ծրագրի տվյալների համադրմամբ:

Էթիկայի հանձնաժողով

5-րդ գումարման Ազգային ժողովի առաջին նստաշրջանում ձևավորվեց ԱԺ Էթիկայի առաջին հանձնաժողովը: Հայաստանյան պառլամենտարիզմի պատմության մեջ առաջին անգամ կանոնակարգման առարկա դարձավ պատգամավորների Էթիկական վարքագիծը, ԱԺ կանոնակարգ օրենքով սահմանվեցին Էթիկայի կանոնները, պատգամավորի պարտականություններն ու սահմանափակումները շահերի բախման համատեքստում:

Հանձնաժողովի ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված էր Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խումբ միջազգային կազմակերպության՝ GRECO-ի հանձնարարականներով և բխում էր 2011թ. ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքից, որով նախատեսվում էր ստեղծել բարձրաստիճան պաշտոնատար անձանց Էթիկայի հանձնաժողով: Խորհրդարանը ստեղծեց ԱԺ Էթիկայի առանձին հանձնաժողով՝ հիմք ընդունելով օրենսդիր իշխանության ինքնուրույնության սկզբունքը, բարձրաստիճան պաշտոնատար անձ համարվող ԱԺ պատգամավորների գործունեության առանձնահատկությունները:

Գործունեության իրավական հիմքերն ու առանձնահատկությունները

ԱԺ կանոնակարգ օրենքով սահմանվում են Էթիկայի հանձնաժողովի հետևյալ գործառույթները.

ա. պատգամավորի կողմից 2005թ. ընդունված Սահմանադրության 65-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ չզբաղվելու, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում այլ պաշտոն չզբաղեցնելու, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից վճարովի այլ աշխատանք չկատարելու պահանջների կատարման կապակցությամբ եզրակացություն ներկայացնելը,

բ. պատգամավորի կողմից շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու ԱԺ կանոնակարգ օրենքով նախատեսված պահանջը չկատարելու կամ նման հայտարարությամբ հանդես գալու անհրաժեշտության վերաբերյալ որոշում կայացնելը,

գ. պատգամավորի Էթիկայի կանոնների խախտման մասին եզրակացություն ներկայացնելը:

Հանձնաժողովը եզրակացություններ ու որոշումներ է կայացնում ԱԺ պատգամավորների կողմից Էթիկայի կանոնների խախտման կամ շահերի բախման վերաբերյալ, վարույթ է հարուցում պատգամավորների և քաղաքացիների գրավոր դիմումների հիման վրա:

Հանձնաժողովի եզրակացությունները և որոշումները հրապարակվում են ԱԺ հերթական ստաշրջանի առաջիկա քառօրյա նիստերում, ապա տեղադրվում խորհրդարանի պաշտոնական կայքում: ԱԺ կանոնակարգ օրենքն այդ որոշումների ու եզրակացությունների քննարկում չի նախատեսում: Բացառություն է ձեռնարկատիրական և այլ գործունեությամբ չգբաղվելու սահմանադրական պահանջի խախտման վերաբերյալ Էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը, որը դառնում է ԱԺ քննարկման ու քվեարկության առարկա և կարող է հանգեցնել պատգամավորի լիազորությունների դադարեցման:

Յուրաքանչյուր ստաշրջանի մեկնարկին ձևավորվում է Էթիկայի հանձնաժողովի նոր կազմ՝ ԱԺ խմբակցությունների առաջադրած թեկնածուներից՝ հիմք ընդունելով ԱԺ ընդդիմադիր և ոչ ընդդիմադիր խմբակցությունների թիվն ու հարաբերակցությունը: Հանձնաժողովում հաջորդաբար նախագահում են ընդդիմադիր և ոչ ընդդիմադիր ամենամեծ խմբակցությունների ներկայացուցիչները:


Հանձնաժողովին կարող է դիմել յուրաքանչյուր ոք: Դիմումը քննելու համար օրենքը սահմանում է 30-օրյա ժամկետ, անհրաժեշտության դեպքում ավելացվում է ևս 15 օր:

Էթիկայի հանձնաժողովի գործունեությունը՝ թվերով

- 5-րդ գումարման խորհրդարանի հետ իր գործունեությունը սկսած Էթիկայի հանձնաժողովը 10 ստաշրջանների ընթացքում անցկացրել է 51 նիստ, ստացել է 32 դիմում: 17 դիմում վարույթ չի ընդունել, 5 դիմումի քննություն կարճվել է, վարույթ ընդունված 1 դիմումի քննություն՝ կասեցվել:


- Հանձնաժողովի նկատմամբ հանրային վստահության մակարդակը, ըստ ստացված դիմումների քանակի, նստաշրջանից նստաշրջան նվազել է. 2-րդ նստաշրջանի ընթացքում հանձնաժողովն ստացել է 13 դիմում, 3-րդ նստաշրջանում՝ 6, 4-րդում՝ 2, իսկ 5-րդում՝ 3 դիմում: 6-րդ և 8-րդ նստաշրջաններում հանձնաժողովը մեկական դիմումներ է ստացել, իսկ 7-րդ նստաշրջանում գրանցել է աննախադեպ պարապուրդի ռեկորդային ցուցանիշ. ոչ մի դիմում չի ստացել, նիստ չի հրավիրել, որոշում չի կայացրել:
- 4 տարվա ընթացքում հանձնաժողովը 7 անգամ է եթիկայի կանոնների խախտում արձանագրել: Որոշումներից 3-ը վերաբերել է Առաքել Մովսիսյանին, 2-ը՝ Միեր Սեդրակյանին, 1-ը՝ Սամվել Ալեքսանյանին: 1 որոշմամբ էլ եթիկայի կանոնների խախտում է արձանագրվել ուրիշի փոխարեն քվեարկած 7 պատգամավորի՝ ԶԶԿ-ականներ Սպարտակ Մելիքյանի, Համլետ Հարությունյանի, Սեդրակ Սարոյանի, Առաքել Մովսիսյանի, Կարեն Սարիբեկյանի, ԲԶԿ-ականներ Արշակ Մխիթարյանի և Բազմասեր Առաքելյանի վերաբերյալ:

Գրաֆիկ 1. 10 նստաշրջանի ընթացքում ԱԺ Եթիկայի հանձնաժողովի գործունեության թվային պատկերը



- 4 տարվա ընթացքում եթիկայի հանձնաժողովին դիմել է ընդամենը 3 պատգամավոր՝ Արմեն Ռուստամյանը, Նիկոլ Փաշինյանը, Չարուհի Փոստանջյանը: Ռուստամյանի դիմումը քննվել է ու մերժվել, Փաշինյանինը կարճվել է, Փոստանջյանինը վարույթ չի ընդունվել:
- 15 դիմում հանձնաժողովը ստացել է հասարակական կազմակերպություններից: 8 անգամ հանձնաժողովին է դիմել «Թրանսփերենսի-ինթերնեյշնլը», 2 անգամ՝ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը»:
- 2 դիմում հանձնաժողովին ներկայացրել են լրագրողները: Դիմումներից մեկը վերաբերել է Առաքել Մովսիսյանին, մյուսը՝ ուրիշ փոխարեն քվեարկած 7 պատգամավորների:

Գրաֆիկ 2. Եթիկայի հանձնաժողովի ստացած դիմումներն՝ ըստ հեղինակների



- 5-րդ գումարման ընթացքում եթիկայի ժամանակավոր հանձնաժողովը դիմումներ է ստացել Արծվիկ Մինասյանի, Էդուարդ Շարմազանովի, Վարդան Այվազյանի, Միքայել Մելքումյանի, Կարո Կարապետյանի, Միեր Սեդրակյանի, Նաիրա Կարապետյանի, Արտակ Չաքարյանի, Նիկոլ Փաշինյանի, Հայկ Բաբուխանյանի, Սամվել Ալեքսանյանի, Առաքել Մովսիսյանի, Մանվել Բադեյանի, Հերմինե Նաղդալյանի, Շուշան Պետրոսյանի վերաբերյալ: Ստացվել է 1 դիմում՝ 7 պատգամավորների՝ Սպարտակ Մելիքյանի, Համլետ Հարությունյանի, Սեդրակ Սարոյանի, Առաքել Մովսիսյանի, Կարեն Սարիբեկյանի, Արշակ Մխիթարյանի և Բազմասեր Առաքելյանի վերաբերյալ:

- Առաքել Մովսիսյանի, Միեր Սեդրակյանի և Սամվել Ալեքսանյանի վերաբերյալ Էթիկայի հանձնաժողովը դիմումներ է ստացել մի քանի անգամ: 3 անգամ քննարկել է Առաքել Մովսիսյանի վարքը: Երեք անգամ էլ որոշել է, որ պատգամավորը խախտել է Էթիկայի կանոնները: 2 անգամ քննարկել է Միեր Սեդրակյանի վարքը: Երկու անգամ էլ որոշել է, որ պատգամավորը խախտել է Էթիկայի կանոնները: 2 անգամ քննարկել է Սամվել Ալեքսանյանի վարքը: Առաջին դիմումին տրվել է դրական եզրակացություն, երկրորդ դիմումը վարույթ չի ընդունվել:

Տեղեկանք:

Սամվել Ալեքսանյանին վերաբերող առաջին որոշումը Էթիկայի հանձնաժողովը կայացրել է 2012-ին: Դիմումատուն քաղաքացի Վարդգես Գասպարին էր, ում ձեռքից, Ազգային ժողովի մոտ բողոքի ակցիա իրականացնելիս, Ալեքսանյանը խլել էր պաստառը: Էթիկայի հանձնաժողովը որոշել է, որ Սամվել Ալեքսանյանը խախտել է պատգամավորի Էթիկայի վարքականոնը:

Միեր Սեդրակյանի վերաբերյալ առաջին որոշումը կայացվել է 3-րդ նստաշրջանում: Էթիկայի հանձնաժողովը, «Թրանսփերենսի ինթերնեյշնլ» կազմակերպության դիմումը քննության առնելով, որոշել է, որ ՀՀԿ-ական Միեր Սեդրակյանը խախտել է պատգամավորի Էթիկայի նորմերը (պատգամավորը սպառնացել էր պոկել խորհրդարանում իրեն հարց ուղղած լրագրողի ծնոտը): Երկրորդ որոշումը հանձնաժողովը կայացրել է «Մեդիա և իրավունք», «Լրագրողների միավորում» և «Ազատ լրագրողների ասոցիացիա» հասարակական կազմակերպություններից ստացված դիմումի հիման վրա: Հիմք ընդունելով a1plus.am կայքում տեղադրված «Նորմալ լրագրողի հետ կխոսեմ» վերնագրով տեսանյութը՝ հանձնաժողովը միանշանակ հաստատված չի համարել դիմումատուների պնդումը, թե Սեդրակյանը հայիոյել է լրագրողին, սակայն որոշել է, որ պատգամավորը, այնուամենայնիվ խախտել է Էթիկայի նորմերը, քանի որ հարգալից չի եղել «այն անձանց նկատմամբ, ում հետ շփվում է իր լիազորությունները իրականացնելիս» (ԱԺ կանոնակարգ, 6.1-րդ հոդված, 2-րդ մաս, ը կետ):

Առաքել Մովսիսյանին վերաբերող առաջին որոշումը Էթիկայի հանձնաժողովը կայացրել է 5-րդ նստաշրջանի ընթացքում լրագրողներ Գրիշա Բալասանյանի, Աննա Եղիազարյանի, Սարգիս Խանդանյանի և Յակոբ Կարապետյանի դիմումի հիման վրա: Զննության առարկան 2013 թվականի դեկտեմբերի 13-ին գազային համաձայնագրերի վավերացման ընթացքում գրանցված միջադեպն էր, երբ Մովսիսյանը, նկատի ունենալով դահլիճ մտած լրագրողներին, ասել էր՝ «Ես կապիկներին դուրս արեք ստուց»:

Հանձնաժողովը որոշել էր, որ պատգամավորը խախտել է Էթիկայի կանոնները: Նույն պատգամավորի վերաբերյալ համանման որոշում կայացվել է նաև 8-րդ նստաշրջանի ընթացքում: Պատգամավորը լրատվամիջոցներից մեկին տված հարցազրույցում հնչեցրել էր բռնության և սպառնալիքի կոչեր պարունակող արտահայտություններ, որոնք ուղղված էին պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի ընտանիքին քննադատողներին: Դիմումատուն Յելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակն էր: Հանձնաժողովը որոշել է, որ պատգամավոր Առաքել Մովսիսյանի արտահայտությունները ենդոցիոնալ բնույթի են, վերացական և որևէ կոնկրետ անձի նկատմամբ իրական սպառնալիք չեն պարունակում: Մինևույն ժամանակ, ըստ հանձնաժողովի, պատգամավոր Առաքել Մովսիսյանը խախտել է Կանոնակարգի 6.1-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետով նախատեսված Էթիկայի կանոնը, այն է՝ դրսևորել է պատգամավորին ոչ վայել վարքագիծ: Առաքել Մովսիսյանին վերաբերող երրորդ որոշումը հանձնաժողովը կայացրել է ուրիշի փոխարեն քվեարկելու հիմքով:

- Էթիկայի հանձնաժողովը կարճել է պատգամավորներ Միքայել Մելքունյանին, Նաիրա Կարապետյանին, Նիկոլ Փաշինյանին, Շուշան Պետրոսյանին, Մանվել Բադեյանին վերաբերող դիմումների քննությունը:
- 10 նստաշրջանի ընթացքում Էթիկայի հանձնաժողովը կին պատգամավորների վերաբերյալ ստացել է 3 դիմում: Դրանք վերաբերել են ՀՀԿ-ական Յերմինե Նաղդալյանին, Շուշան Պետրոսյանին, Նաիրա Կարապետյանին: Նաղդալյանի դիմումը վարույթ չի ընդունվել, մյուս երկուսի քննությունը կարճվել է:
- 10 նստաշրջանի ընթացքում Էթիկայի հանձնաժողովը շահերի բախման խնդրին առնչվող ընդամենը 2 հարց է քննարկել: Դեպքերից մեկը վերաբերում էր ԲՀԿ խմբակցության պատգամավոր Միքայել Մելքունյանին, մյուսը՝ ԱԺ փոխնախագահ, ՀՀԿ խմբակցության անդամ Յերմինե Նաղդալյանին: Երկու դեպքում էլ հանձնաժողովը ներկայացված դիմումները մերժել է ապացույցների բացակայության պատճառաբանությամբ:

Տեղեկանք:

«Թրանսփերենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի դիմումի հիմքում «Յեոք» պարբերականի օգոստոսի 29-ի հրապարակումն էր՝ «Նաղդայանին պատկանող ընկերության հետ 409 մլն դրամի պետական գնման պայմանագիր է կնքվել» վերնագրով: ՅԿ-ն դիմել էր հանձնաժողովին՝ Յերմինե Նաղդայանի կողմից օրինաստեղծ գործունեությունը ձեռնարկատիրական գործունեությամբ զուգակցելը ԱԺ պատգամավորի էթիկայի կանոնների խախտում համարելու համար: Դիմումը քննելով՝ հանձնաժողովը եզրակացրել էր, որ դիմողը չի ներկայացրել որևէ փաստաթուղթ կամ ապացույց, որը կհիմնավորեր, որ Յերմինե Նաղդայանը Ազգային ժողովի, հանձնաժողովների կամ ենթահանձնաժողովների նիստերի ընթացքում խախտել է շահերի բախման մասին հայտարարությամբ հանդես գալու իր պարտականությունը: Փոխարենը՝ պատգամավոր Յերմինե Նաղդայանը հանձնաժողովին տեղեկանք էր ներկայացրել, որ հողվածում հիշատակվող «Սիսիան ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասը հանձնել է հավատարմագրային կառավարման: Արձանագրելով, որ պատգամավորը կատարել է օրենքով պահանջվող բոլոր թղթային ձևակերպումները՝ էթիկայի հանձնաժողովը մերժել էր «Թրանսփերենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնից ստացած դիմումը:

«Ռազմավարական մշակումների կենտրոն» ՅԿ-ի դիմումը վերաբերում էր ԱԺ ԲՅԿ խմբակցության պատգամավոր Միքայել Մելքումյանին: Դիմումատուն, հիմնվելով Մելքումյանի մասին համացանցում տարածված տեսագրության վրա, կարծում էր, որ պատգամավորը զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ՝ խախտելով սահմանադրական պահանջը: Քննարկման արդյունքում հանձնաժողովը որոշել է կարճել դիմումի քննությունը:

- Էթիկայի հանձնաժողովը երկու դիմում է ստացել ուրիշի փոխարեն քվեարկելու փաստերի վերաբերյալ: Առաջին դիմումը, որը վերաբերում էր 7 պատգամավորի, դրական եզրակացություն է ստացել, երկրորդը՝ ներկայացված «Մեդիա և իրավունք» հասարակական կազմակերպության կողմից, քննության փուլում է:

Տեղեկանք:

9-րդ նստաշրջանի ընթացքում Եթիկայի հանձնաժողովը դրական որոշում է ընդունել՝ ի պատասխան լրագրող Լիլիթ Լալայանի դիմումի, որն առնչվում էր միանգամից 7 պատգամավորի՝ ԶԶԿ-ականներ Սպարտակ Մելիքյանին, Յամլետ Յարությունյանին, Սեդրակ Սարոյանին, Առաքել Մովսիսյանին, Կարեն Սարիբեկյանին, ԲԶԿ-ականներ Արշակ Մխիթարյանին և Բազմասեր Առաքելյանին: Նրանք 7-րդ նստաշրջանի ավարտին անցկացված քվեարկությունների ժամանակ քվեարկել էին բացակա գործընկերների փոխարեն: Լրագրողը, հիմք ընդունելով pastinfo.am կայքի տեսանյութը, հանձնաժողովին խնդրել էր գնահատել պատգամավորների վարքագիծը՝ համաձայն ԱԺ կանոնակարգով սահմանված Եթիկայի նորմերի:

Հանձնաժողովը որոշմամբ արձանագրել էր, որ 7 պատգամավորները խախտել են Կանոնակարգի 6.1-րդ հոդվածի 5-րդ մասը, համաձայն որի պատգամավորը քվեարկում է անձամբ՝ կողմ, դեմ, ձեռնպահ, կամ 99-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված կարգով հրաժարվում է քվեարկելուց: Խախտելով այս դրույթը, հանձնաժողովի որոշմամբ, պատգամավորները խախտել են նաև Կանոնակարգի 6.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված Եթիկայի կանոնները, այն է՝ հարգել օրենքը, ենթարկվել օրենքին, պահպանել Ազգային ժողովի և նրա հանձնաժողովների նիստերի անցկացման կարգը:

Նույն որոշմամբ հանձնաժողովը Ազգային ժողովի նախագահին նաև առաջարկել էր քննարկել «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը, որով առաջարկվում էր ուրիշի փոխարեն քվեարկող պատգամավորին համարել կարգազանց, ինչը նիստը վարողին թույլ կտար կիրառել օրենքով սահմանված կարգապահական միջոցները: Հանձնաժողովն առաջարկել էր նաև ուրիշի փոխարեն գրանցվող կամ քվեարկող պատգամավորի նկատմամբ կիրառել կանոնակարգի 45-րդ հոդվածով սահմանվող ամենախիստ կարգապահական միջոցը, այն է՝ նիստերի ընթացքում 6 օրով պատգամավորին զրկել Ազգային ժողովի նիստերի դահլիճում գտնվելու իրավունքից: Ավելի քան 2 տարի օրակարգում ընդգրկված նախագիծն Եթիկայի հանձնաժողովի առաջարկով ամբողջությամբ ընդունվել է, սակայն ուրիշի փոխարեն քվեարկելու համար պատասխանատվություն նախատեսող դրույթն այդպես էլ չի կիրառվել:

- Գումարման ընթացքում 1 անգամ էթիկայի հանձնաժողովը ղեկավարել է ՀԱԿ խմբակցությունը, 6 անգամ՝ ՀՀԿ-ն, 2 անգամ՝ ԲՀԿ-ն: ՀԱԿ-ը, 3-րդ նստաշրջանից հետո, բոլորում է հանձնաժողովի աշխատանքները. հանձնաժողովի կազմում ներկայացված չէ ու նիստերին չի մասնակցում:
- Էթիկայի հանձնաժողովի նախագահներից միայն Նիկոլ Փաշինյանն է հանձնաժողովի եզրակացությունը հրապարակել ԱԺ ամբիոնից: Մնացած ղեկավարում որոշումների գրավոր տեքստերը բաժանվել է պատգամավորներին:

Հիմնական միտումներն ու խնդիրները (փորձագիտական վերլուծություն)

5-րդ գումարման ընթացքում էթիկայի հանձնաժողովի գործունեության արձանագրած միտումների վերլուծությունը կարող է ախտորոշում դառնալ հաջորդ գումարման ԱԺ-ում Էթիկայի հանձնաժողովի ինստիտուցիոնալ կայացման, արդյունավետության բարձրացման համար:

- Առաջին 4 նստաշրջաններում էթիկայի հանձնաժողովի գործունեության վրա էական ազդեցություն են ունեցել քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունները: Որոշումների հիմքում եղել են ոչ թե խախտումների հանգամանքների օբյեկտիվ քննությունն ու դրանց արդյունքների հրապարակումը, այլ խմբակցությունների միջև կուլիսային պայմանավորվածությունները, խախտումներ թույլ տվող պատգամավորների հանդեպ քաղաքական «պաշտպանության» ցուցաբերումը: Երկրորդ և երրորդ նստաշրջանների ընթացքում հանձնաժողով ստացվող դիմումների թիվը համեմատաբար մեծ էր, և դրանք հիմնականում վերաբերում էին ՀՀԿ-ական պատգամավորների վարքագծին ու շահերի բախման սկզբունքի խախտմանը: ԱԺ քաղաքական մեծամասնությունը՝ ՀՀԿ-ՕԵԿ կուլիցիան, էթիկայի հանձնաժողովում որակական փոքրամասնություն էր (թվով 3, ոչ իշխանական խմբակցությունները ներկայացնող 4 անդամի դիմաց), ինչը թույլ չէր տալիս էական ազդեցություն ունենալ քվեարկությունների և որոշումների կայացման վրա:

Ավելի ուշ ԱԺ մեծամասնությունը գնաց Էթիկայի հանձնաժողովի կազմավորման սկզբունքի օրենսդրական փոփոխության՝ «մեկ խմբակցություն՝ հանձնաժողովի մեկ անդամ» մոտեցումից անցնելով հանձնաժողովում իշխանական և ընդդիմադիր խմբակցությունների հավասար թվով անդամներ ունենալու «50-50» սկզբունքին: Այդպիսով՝ ԱԺ քաղաքական մեծամասնությունը չեզոքացրեց հանձնաժողովում որակական փոքրամասնություն լինելու իրողությունը, իսկ առանձին դրվագներում ԲՀԿ-ի հետ փոխհամաձայնեցվածությամբ ապահովեց որոշումների կայացման «հսկիչ փաթեթը»:

- 5-րդ նստաշրջանից սկսած արձանագրվել են Էթիկայի հանձնաժողովի դերակատարության և ազդեցության նվազման միտումներ: 2014թ. ապրիլից, երբ ՕԵԿ-ն իրեն հռչակեց ընդդիմադիր խմբակցություն, Էթիկայի հանձնաժողովում խախտվեց ընդդիմադիր և ոչ ընդդիմադիր անդամների միջև հավասարակշռությունը, քանի որ ՀՀԿ-ն հրաժարվեց օգտվել ԱԺ կանոնակարգով իրեն տրվող՝ Էթիկայի հանձնաժողովում ևս մեկ անդամ ներգրավելու իրավունքից, ինչը ոչ իշխանական ուժերի անդամներին որակական մեծամասնություն ստանալու և, հետևաբար, Էթիկայի հանձնաժողովը «վերակենդանացնելու» հնարավորություն էր տալիս: Սակայն դրանից ԱԺ փոքրամասնությունը չօգտվեց ընդհուպ մինչև 5-րդ գումարման ժամկետի ավարտը: ՀԱԿ-ը, որը հանձնաժողովի քաղաքականացման պատճառով բոյկոտել էր դրա աշխատանքները, չփոխեց իր որոշումը: Դրանով նաև ոչ իշխանական ուժերը հաստատեցին հանձնաժողովի արդյունավետությունը բարձրացնելու հարցում իրենց շահագրգռվածության բացակայությունը: Հատկանշական է, որ Էթիկայի հանձնաժողովի ոչ մի անդամ երբևէ չի օգտվել հանձնաժողովի կանոնակարգի 62-րդ կետով սահմանված՝ «Հանձնաժողովի վերջնական որոշման կամ եզրակացության եզրափակիչ և պատճառաբանական մասի վերաբերյալ հատուկ կարծիք» ներկայացնելու իրավունքից:
- 10 նստաշրջանների ընդհանուր դիտարկումը թույլ է տալիս պնդել, որ ամեն ինչ արվել է Էթիկայի հանձնաժողովի ամենակարևոր հակակոռուպցիոն գործառույթը՝ պատգամավորների շահերի բախման նկատմամբ վերահսկողությունն ու կանոնակարգումը, ձևականացնելու, Էթիկայի հանձնաժողովը բացառապես պատգամավորների վարքագիծը գնահատելու գործիքի վերածելու համար: 10 նստաշրջանի ընթացքում Էթիկայի հանձնաժողովը շահերի բախման խնդրին առնչվող ընդամենը 2 հարց է քննության առել, 2-ն էլ՝ մինչև 3-րդ նստաշրջանը: 2 դեպքում էլ Էթիկայի հանձնաժողովը եզրակացրել է, որ պատգամավորները չեն խախտել շահերը հայտարարագրելու ԱԺ կանոնակարգ օրենքի կամ Սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասի պահանջները:

Դեպքերից մեկը վերաբերում էր ԲՀԿ պատգամավոր Միքայել Մելքումյանի, մյուսը՝ ԱԺ փոխնախագահ, ՀՀԿ անդամ Ջերմինե Նաղդայանի կողմից պատգամավորական գործունեությանը զուգահեռ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելուն: 2 դեպքում էլ Էթիկայի հանձնաժողովը ներկայացված դիմումները մերժել է ապացույցների բացակայության պատճառաբանությամբ: Այս հարցում հանձնաժողովի ցուցաբերած հետևողականությունը թերևս պայմանավորված է նրանով, որ նրա եզրակացությունները կարող էին պատգամավորներին մանդատից զրկելու գործընթաց սկսելու հիմք դառնալ: Հանձնաժողովի նման վերաբերմունքը կարող է բացատրվել շահերի բախման հիմքով պատգամավորին մանդատից զրկելու նախադեպ չստեղծելու տրամադրվածությամբ, ինչն, անտարակույս, հարվածում է Էթիկայի հանձնաժողովի հեղինակությանը:

- Հնգամյա գործունեության ընթացքում արձանագրվել է Էթիկայի հանձնաժողովի նկատմամբ վստահության անկման հաստատուն միտում: Դրա մասին է վկայում նստաշրջանից նստաշրջան հասարակական շրջանակներից ստացված դիմումների նվազման կայուն ընթացքը, ինչպես նաև այն իրողությունը, որ պատգամավորների կողմից ընդամենը 3 դիմում է ներկայացվել: Արտախորհրդարանական, քաղաքացիական շրջանակների ակտիվության ցուցանիշի անկման հիմքում Էթիկայի հանձնաժողովի անարդյունավետության գործոնն է, պատգամավորների պարագայում՝ միմյանց նկատմամբ «գործ չտալու», միմյանց չվստահելու կոլեգիալ համերաշխությունը:
- Այն հանգամանքը, որ 5-րդ գումարման ԱԺ 10 նստաշրջանների ընթացքում դիմումների 45 տոկոսը ստացվել է առաջին երկու նստաշրջաններում, խոսում է նախնական շրջանում հանձնաժողովից հանրային մեծ սպասելիքների, Էթիկայի հանձնաժողովը գործուն օրգանիզմ դարձնելու շահագրգռության մասին: Հետագայում դիմումների քանակի նվազումն այնքան, որ 6-8-րդ նստաշրջաններում ընդհանուր առմամբ հանձնաժողովն ընդամենը 2 դիմում է ստանում, վկայում է այդ սպասելիքները չարդարանալու մասին:

Հանձնաժողովի նկատմամբ վստահության անկումը պայմանավորված է հետևյալ հիմնական գործոններով.

- Գործերը վարույթ ընդունելու հարցում կամայական մոտեցման ցուցաբերում

Հանձնաժողովը 32 դիմումների մոտ 75 տոկոսին փաստացի ընթացք չի տվել՝ վարույթ չընդունելով, քննությունը կարճելով կամ կասեցնելով: Դրանց մի մասի դեպքում օբյեկտիվորեն բարձրացվող հարցերը դուրս են եղել հանձնաժողովի իրավասությունների դաշտից, մի մասի պարագայում էլ ակնհայտ է եղել սուբյեկտիվ, հիմնականում՝ քաղաքական, անձնական նկատառումներով առաջնորդվելու հակումը: Օրինակ՝ մի դեպքում հանձնաժողովը որպես ապացույց չի ընդունում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու փաստն արձանագրող ձայնագրությունը, մյուս դեպքում դիմումին կից ներկայացված տեսանյութը հիմք ընդունելով՝ կարգազանց է ճանաչում մի խումբ պատգամավորների՝ գործընկերների փոխարեն քվեարկելը:

- **Նախադեպային որոշումներով չառաջնորդվելու պրակտիկա**

Առանձին դեպքերում էթիկայի հանձնաժողովն անհետևողականություն ու անսկզբունքայնություն է դրսևորել միևնույն բնույթի տարբեր գործերի քննության ժամանակ՝ հանգելով հակասական եզրահանգումների: Դրա օրինակներից են հրապարակայնորեն անձի հանդեպ վիրավորական արտահայտություններ թույլ տալու՝ պատգամավոր Առաքել Մովսիսյանի վարքագիծը հակաէթիկական ճանաչելու, իսկ Շուշան Պետրոսյանինը որպես այդպիսին չորակելու հանձնաժողովի տարբերակված, հակասական դիրքորոշումները: Նման հարցերում նախադեպային որոշումների պրակտիկայից խուսափելը խոսում է իրավիճակային լուծումներով առաջնորդվելուն նախապատվություն տալու մասին:

- **Էթիկական խախտումների վերաբերյալ եզրակացությունների կարգապահական, իրավական հետևանքների բացակայություն**

3 պատգամավորների վերաբերյալ խախտում արձանագրող 7 որոշում ընդունելու հանգամանքը խոսում է այն մասին, որ էթիկայի հանձնաժողովի կայացրած որոշումներն ու տված եզրակացությունները չեն հանգեցնում այդ խախտումները թույլ տված պատգամավորների վարքագծի փոփոխության, չեն ընկալվում որպես վարքագծի վրա ազդող գործոն: Խախտումների արձանագրումը և հիմնավորումը պատգամավորների համար իրավական, ֆինանսական, կարգապահական, վարչական հետևանքներ չեն առաջացնում: Բացառություն է միայն ուրիշի փոխարեն քվեարկելու պրակտիկայի դեմ պայքարի համատեքստում ԱԺ էթիկայի հանձնաժողովին վերապահված գործառույթը: 2016թ. կատարված օրենսդրական փոփոխությամբ միմյանց փոխարեն պատգամավորների քվեարկությունը համարվեց կարգազանցություն, որի մասին եզրակացությունը տալիս է էթիկայի հանձնաժողովը:

Դրա հիման վրա ԱԺ նախագահը կարող է կարգազանց պատգամավորների նկատմամբ կիրառել կարգապահական տույժեր: Ընդ որում՝ օրենքը վերջնականապես ընդունվեց հենց Էթիկայի հանձնաժողովի կողմից 7 պատգամավորների վերաբերյալ համապատասխան դիմումի քննության արդյունքում արված առաջարկության հիման վրա, ինչը հաստատում է, որ քաղաքական կամքի դրսևորման դեպքում հանձնաժողովի եզրակացությունները կարող են հանգեցնել նաև օրենսդրական փոփոխությունների և բարձրացնել Էթիկայի հանձնաժողովի և նրա եզրակացությունների կիրառական, պրակտիկ նշանակությունը:

- Որոշումների հրապարակայնացման կամայական մեկնաբանումը

Բացառությամբ երկրորդ նստաշրջանի՝ հանձնաժողովի եզրակացությունները և որոշումները հավուր պատշաճի չեն հրապարակվել: «Հրապարակում» է համարվել դրանք ընդամենը թղթե կրիչով պատգամավորներին բաժանելը և ԱԺ կայքէջի Էթիկայի հանձնաժողովի վերաբերող հատվածում տեղադրելը՝ առանց ԱԺ ամբիոնից հնչեցվելու:

Սա կարելի է բնութագրել մի կողմից՝ որպես օրենսդրության պահանջների յուրովի մեկնաբանում, մյուս կողմից՝ որպես խախտում կատարած պատգամավորի արարքի հանրային պարսավանքի հնարավորությունների սահմանափակում:

Եզրակացություններ

5-րդ գումարման ԱԺ 10 նստաշրջաններում Էթիկայի հանձնաժողովի գործունեության ընթացքում դրսևորված վերոնշյալ միտումներն ու հիմնահարցերը թույլ են տալիս հանգելու մի քանի հիմնական եզրակացության:

- ԱԺ կանոնակարգով սահմանված՝ Էթիկայի առավելապես հռչակագրային և ընդհանրական բնույթ ունեցող մի քանի կանոնները, ինչպես նաև շահերի բախման ինստիտուտն ամբողջությամբ շարունակում են կարգավորիչ ազդեցություն չունենալ պատգամավորների վարքագծի և գործունեության վրա: Հատկանշական է, որ խախտումների հայտնաբերման մասին Էթիկայի հանձնաժողովի բոլոր որոշումները վերաբերում են բացառապես պատգամավորի բարեվարքության կանոնների խախտմանը, ինչը հուշում է, որ շահերի բախման երևույթների բացահայտման և զսպման առումով հանձնաժողովը որևէ դերակատարություն առայժմ չունի:

Փաստացի էթիկայի գործառնական նշանակությունը 10 սատաշրջանների ողջ ընթացքում ակտուալիզացվել է միայն այլ պատգամավորների փոխարեն քվեարկության արմատավորված պրակտիկան վերացնելու և մասամբ քվեարկություններից պատգամավորների բացակայությունների հիմքերի պարզաբանման անհրաժեշտությունը գիտակցելու տեսանկյունից:

- Պառլամենտում էթիկայի հանձնաժողովի ինստիտուտի կայացման հարցում շահագրգռության պակասն ակնառու է ինչպես խորհրդարանական մեծամասնության, այնպես էլ փոքրամասնության վարքագծում: Հանձնաժողովի աշխատանքներում պատգամավորների ներգրավվածության հիմնական կամ միակ պարտավորեցնող գործոնը նրա բնականոն գործունեության ապահովման՝ ԱԺ կանոնակարգով սահմանված իմպերատիվ պահանջն է: Այսինքն, հանձնաժողովի գործունեությունն ապահովվում է ոչ թե պատգամավորների մեծամասնության կողմից դրա կարգավորիչ նշանակությունը և անհրաժեշտությունը գիտակցելու, գնահատելու և խթանելու հանգամանքով, այլ միայն օրենքի պահանջը հնարավորինս ֆորմալ մակարդակով կատարելու պարտավորվածությամբ:
- Հանձնաժողովի արդյունավետությունը՝ պայմանավորված գործերը վարույթ ընդունելու հարցում հանձնաժողովի կամայական մոտեցումներով, հնարավոր խախտումների փաստական, ապացուցողական բազան հնարավորինս սահմանափակելու, նույնատիպ գործերի պարագայում երբեմն թույլ հիմնավորումներով հակասական որոշումներ կայացնելու, խախտումների վերաբերյալ գործնական հետևանք չառաջացնող եզրակացությունների ու որոշումների հրապարակայնությունը սահմանափակելու գործոններով, մտում է առավել քան ինդրահարույց՝ շոշափելով նման ազդեցությամբ հանձնաժողովի գոյության նպատակահարմարության հարցը:
- 6-րդ գումարման ԱԺ-ում էթիկայի հանձնաժողովի գործնական նշանակության և ազդեցության բարձրացման, արդյունավետության խթանման տեսանկյունից ակնհայտ է հանձնաժողովի ձևավորման, գործունեության կարգի, որոշումների ու եզրակացությունների հանդեպ պատգամավորների վերաբերմունքի փոփոխությանն ուղղված իրավական նոր լուծումներ գտնելու, սկզբունքային փոփոխությունների գնալու օբյեկտիվ անհրաժեշտությունը: Դա կարևոր է առնվազն նույն պատգամավորի կողմից երկու և ավելի անգամ էթիկայի խախտումներ կատարելու դեպքում կարգապահական տույժեր կիրառելու պարտադիր նորմեր սահմանելու, պատգամավորների շահերի հայտարարագրման ինստիտուտի

Ներդրման, ինչպես նաև Էթիկայի հանձնաժողովի անդամներին պատգամավորների կողմից Էթիկայի նորմերի կամ շահերի բախման կանոնակարգումների խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու իրավունք նախատեսելու առումներով:

ԱԺ պատգամավորների բացակայությունների հիմնահարցը

ԱԺ լիազումար նիստերին, հանձնաժողովների աշխատանքներին պատգամավորների մասնակցությամբ, բացակայություններին ու քվեարկություններին առնչվող իրավակարգավորումների և իրավակիրառական պրակտիկայի դիտարկումը ևս բացահայտում է լուրջ և կարգավորում պահանջող հիմնախնդիրներ:

ԱԺ կանոնակարգ օրենքի տրամաբանությամբ՝ պատգամավորի պարտականություն է համարվում ոչ թե օրենքների կամ որոշումների քվեարկությունը, այլ մասնակցությունը ԱԺ նիստերին, հանձնաժողովների և ենթահանձնաժողովների աշխատանքներին: Պատգամավորի պարտականությունները սահմանող 6-րդ հոդվածում քվեարկություններին մասնակցության մասին խոսք չկա: Չնայած դրան՝ ԱԺ կանոնակարգ օրենքի 99-րդ հոդվածը իրավական պատասխանատվություն, լիազորությունների դադարում է նախատեսում քվեարկություններից, այլ ոչ թե նիստերից պատգամավորի բացակայելու համար: Ընդ որում՝ քվեարկություններից անհարգելի բացակայելու դեպքում պատգամավորի լիազորությունների դադարման կարգը սահմանող ԱԺ կանոնակարգի 99-րդ հոդվածը չի հստակեցնում, թե բացակայությունների հաշվառումը որքանով է վերաբերում նաև հանձնաժողովներում, ենթահանձնաժողովներում և աշխատանքային խմբերում կազմակերպված քվեարկություններին: Այս իրողությունները բացահայտում են, որ պատգամավորը կարող է քվեարկություններին ֆորմալ մասնակցություն ապահովելու դեպքում ֆիզիկապես բացակայել ԱԺ լիազումար նիստերի և հանձնաժողովների օրակարգային քննարկումներից՝ առանց իրավական, վարչական, կարգապահական պատասխանատվության ենթարկվելու մտավախության: Այսուհանդերձ, նիստերին պատգամավորի մասնակցությունը որպես պարտականություն ամրագրելը, դրա չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում իրավական ամենախիստ հետևանքներ սահմանելը չեն կարող երաշխավորել պատգամավորների բովանդակային, արդյունավետ և ակտիվ օրինաստեղծ գործունեություն:

Տեղեկանք:

10 նստաշրջանի ընթացքում ամենաշատ բացակայած պատգամավորների տասնյակը

Գագիկ Ծառուկյան (ԲՀԿ)	951	Արրահամ Մանուկյան(ԲՀԿ)	465
Վարդան Օսկանյան(ԲՀԿ)	589	Կարո Կարապետյան(ԲՀԿ)	452
Աշոտ Աղաբաբյան (ՀՀԿ)	545	Արմեն Բաբայան(ՀՀԴ)	450
Հրանտ Բագրատյան(ՀԱԿ)	480	Ռուբեն Գևորգյան(ԲՀԿ)	344
Գուրգեն Արսենյան (ԲՀԿ)	474	Չարուհի Փոստամյան(ԺԱՌ.)	344

ԱԺ կանոնակարգի համաձայն՝ պատգամավորի բացակայությունները հաշվառում է ԱԺ աշխատակազմը: Օրենքի 99-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված են պատգամավորների բացակայությունները հարգելի ճանաչելու հետևյալ դեպքերը՝

ա. երբ պատգամավորը, գործունակությունը վերականգնվելուց հետո՝ չորսօրյա ժամկետում, ԱԺ աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է անաշխատունակության թերթիկ,

բ. երբ նա Ազգային ժողովի կողմից ուղարկվել է գործուղման,

գ. երբ ձերբակալվել է կամ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, և նա չի դատապարտվել ազատազրկման կամ նրա նկատմամբ կայացվել է քրեական հետապնդումը դադարեցնելու որոշում,

դ. երբ բացակայելուց առաջ կամ քվեարկությունից հետո՝ չորսօրյա ժամկետում, իր բացակայության պատճառի մասին պատգամավորը պաշտոնապես տեղեկացնում է Ազգային ժողովի նախագահին, և վերջինիս կողմից այն համարվում է հարգելի,

- ե. երբ հերթական ստաշրջանի ավարտից հետո՝ 15-օրյա ժամկետում, իր բացակայության պատճառի մասին նա պաշտոնապես տեղեկացնում է Ազգային ժողովի նախագահին, և այն վերջինիս կողմից համարվում է հարգելի,
- զ. երբ սահմանված կարգով նա հայտարարել է քվեարկությանը չմասնակցելու մասին,
- է. երբ խմբակցության ղեկավարը կամ քարտուղարը քվեարկությունից առաջ հայտարարել են խմբակցության՝ քվեարկությունից հրաժարվելու մասին:

Տեղեկանք:

Ըստ Parliamentmonitoring.am-ի վիճակագրության՝ 5-րդ գումարման 10 ստաշրջանի ընթացքում տեղի ունեցած 963 քվեարկությունների կեսից ավելիից բացակայել է 3 պատգամավոր՝ Գագիկ Ծառուկյանը (95 1), Վարդան Օսկանյանը (589) և Աշոտ Աղաբաբյանը (545): Վարդան Օսկանյանն ընդհանրապես չի մասնակցել 10-րդ ստաշրջանին, Աշոտ Աղաբաբյանը՝ 9-րդ-ին և 10-րդին: Գագիկ Ծառուկյանը մասնակցել է միան 3-րդ ստաշրջանի 2 նիստի, 8 ստաշրջանի ընդհանրապես չի մասնակցել: Բոլոր ստաշրջաններում բացակայությունների կեսից ավելին համարվել է հարգելի:

Կանոնակարգը ԱԺ նախագահին է վերապահում պատգամավորների բացակայությունները հարգելի կամ անհարգելի ճանաչելու միանձնյա որոշում կայացնելու իրավունքը՝ տալով նաև կամայականություն դրսևորելու լայն հնարավորություն:

- Զվեարկություններից բացակայության հիմքերն ընդհանրական են և մեկնաբանելի: Երբ պատգամավորը ԱԺ նախագահին տեղեկացնում է իր բացակայության պատճառների մասին, ներկայացնում անհրաժեշտ տեղեկանքներ, դժվար է ասել, թե դրանց հիման վրա ԱԺ նախագահի կայացրած որոշումը որքանով է հիմնավորված:

- Պարզ և թափանցիկ չեն բացակայությունը հարգելի կամ անհարգելի ճանաչելու կառուցակարգերը: Գործնականում ամեն ինչ թողնված է ԱԺ նախագահի հայեցողությանը: Ասվածի լավագույն օրինակը 2015թ. փետրվարին Գագիկ Ծառուկյանի հետ տեղի ունեցած միջադեպն էր՝ դրանից բխող հետևանքներով. ՀՀ նախագահը հանձնարարեց ԱԺ պատգամավոր Գագիկ Ծառուկյանի բացակայություններն անհարգելի ճանաչելու հիման վրա սկսել նրան մանդատից զրկելու գործընթաց, մինչդեռ դրանից առաջ ԱԺ նախագահը Ծառուկյանի բացակայությունները ճանաչել էր հարգելի: Պատգամավորի բացակայությունները հարգելի կամ ոչ հարգելի ճանաչելու որոշումների կայացումը, ըստ էության, փակ գործընթաց է, ինչը թույլ չի տալիս պարզել, թե տվյալ պատգամավորի բացակայությունները որքանով են համապատասխանում «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի 99-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ հարգելի ճանաչվելու հիմքերին, որքանով են ԱԺ նախագահի կայացրած որոշումներն իրավաչափ, որքանով են պատգամավորները պահպանում բացակայությունների հարգելի լինելու հանգամանքը հավաստող տեղեկանքների ներկայացման՝ օրենքով սահմանված ժամկետները: Մինչդեռ, բացառությամբ պատգամավորի հնարավոր անաշխատունակության պատճառների, որոնք կարող են առնչվել անձնական և ընտանեկան գաղտնիքի իրավունքին, ԱԺ կանոնակարգով նախատեսված հարգելի բացակայության մասացած բոլոր հիմքերը ենթադրում են հրապարակայնություն:
- ԱԺ կանոնակարգը սահմանում էր, որ եթե ԱԺ-ն փակ գաղտնի քվեարկությամբ անհարգելի էր ճանաչում մեկ նստաշրջանի ընթացքում քվեարկություններից պատգամավորի բացակայությունների կեսից ավելին, նրա լիազորությունները դադարեցվում են: Սակայն Սահմանադրական դատարանը, ի պատասխան Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի որոշ դրույթներ հակասահմանադրական ճանաչելու մասին մի խումբ պատգամավորների դիմումի՝ 2013թ. ապրիլի 16-ի որոշմամբ չեղարկեց ԱԺ կանոնակարգի 99-րդ հոդվածի այն դրույթները, որոնք վերաբերում էին ԱԺ քվեարկության միջոցով բացակայություններն անհարգելի ճանաչելուն և պատգամավորի լիազորություններն այդ հիմքով դադարեցնելուն: Հիմնավորման համաձայն՝ պատգամավորը անհարգելի բացակայությունների պատճառով մանդատից պետք է զրկվի ոչ թե ԱԺ-ի քվեարկությամբ, այլ օրենքի ուժով, անհարգելի բացակայությունների մասին կազմված արձանագրության հիման վրա: Չնայած ՍԴ-ն այս որոշմամբ ԱԺ-ին պարտավորեցնում էր փոփոխություն կատարել ԱԺ կանոնակարգ օրենքում, նման գործընթաց տեղի չունեցավ: Խորհրդարանում շրջանառության մեջ դրվեց օրենսդրական փոփոխությունների մի նախագիծ, որով բացակայությունները հարգելի կամ անհարգելի

ճանաչելու գործառույթը ԱԺ նախագահից փոխանցվում էր էթիկայի հանձնաժողովին: Սակայն առաջին ընթերցմամբ ընդունվելուց հետո, հենց ՍԴ վերոնշյալ որոշման ընդունմամբ պայմանավորված, այդ նախագիծն այլևս քննարկման առարկա չդարձավ՝ շարունակելով մտալ շրջանառության մեջ:

- Օրենսդրությունը կոնկրետ ընթացակարգեր սահմանում է միայն նստաշրջանի ընթացքում քվեարկությունների կեսից ավելին անհարգելի բացակայած համարվելու դեպքում ԱԺ պատգամավորի լիազորությունների դադարման վերաբերյալ: Սակայն կարգավորում չկա այն դեպքերի համար, երբ ԱԺ պատգամավորը մեկ կամ (առավել ևս) մի քանի նստաշրջան շարունակ բացակայել է բոլոր քվեարկություններից ընդհանրապես: Եթե բոլոր քվեարկություններից բացակայության կեսից ավելին ԱԺ նախագահն իր սուբյեկտիվ գնահատականով ճանաչում է հարգելի, անկախ մտացած մասի անհարգելի լինելու հանգամանքից՝ պատգամավորը շարունակում է պահպանել իր կարգավիճակը՝ դրանից բխող բոլոր իրավունքներով և անձեռնմխելիությամբ: Ստացվում է, որ պատգամավորը կարող է ընտրվելուց հետո առհասարակ որևէ նստաշրջանի չմասնակցել, բայց քվեարկությունների կեսից ավելին «հարգելի բացակայած» լինելու մասին ԱԺ նախագահին իրազեկելով կամ տեղեկանք ներկայացնելով՝ խուսափել պատասխանատվությունից:
- Պատահական չէ, որ եթե մինչև այս գումարման Ազգային ժողովի 8-րդ նստաշրջանը խորհրդարանում բոլոր նիստերից ու քվեարկություններից բացակայած միակ պատգամավորը Գագիկ Ծառուկյանն էր, ապա դրանից հետո նման ցուցանիշ արձանագրեցին նաև պատգամավոր Աշոտ Աղաբաբյանը, մասամբ՝ Վարդան Օսկանյանը:

Փաստացի, ԱԺ նախագահը Գագիկ Ծառուկյանի բացակայությունը հանդուրժելի դարձնելով՝ ստեղծել է պատգամավորների՝ իրենց սահմանադրական պարտականությունների կատարման առումով անգործությունն արդարացնելու և լեգիտիմացնելու վտանգավոր նախադեպ:

